ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

12.09.2013
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
2. Կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
3. Ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
4. Ամբիոնների 2013-14 ուստարվա աշխատանքային պլանների հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
5. Ամբիոնների դասախոսների 2013-14 ուստարվա անհատական պլանների հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
6. ՀԳ ֆակուլտետի 2013-14 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը ներկայացրեց այն չափանիշները, որոնք բավարարելու դեպքում միայն ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի: Առանձնակի շեշտադրվեց ուսանողի անառարկելի բարձր ակադեմիական առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Պարոնյանին զեկուցողը առաջարկեց «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի: Նա վերջին 4 կիսամյակներին առանց ընդհատման ունեցել է գերազանց առաջադիմություն և բավարար չափով մասնակցել է ուսանողական հասարակական աշխատանքներին:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Գևորգյանին զեկուցողը առաջարկեց «Վազգեն Սարգսյանի» անվան կրթաթոշակի: Նա վերջին 2 կիսամյակներին առանց ընդհատման ունեցել է գերազանց առաջադիմություն և բավարար չափով մասնակցել է ուսանողական հասարակական աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու ՀԳ ֆակուլտետից ներկայացված անվանական կրթաթոշակի ներքոհիշյալ թեկնածուներին.
- Աննա Պարոնյան- «Շառլ Ազնավուրի» անվան
- Լուսինե Գևորգյան- «Վազգեն Սարգսյանի» անվան

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Դեկանը առանձնահատուկ կարևորեց կուրսային և ավարտական աշխատանքների կատարման, վերահսկման աշխատանքները ֆակուլտետում: Դրանք գիտական աշխատանքի առաջին աստիճաններն են, որոնք կոչված են զարգացնելու ուսանողի ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունները, ստեղծագործական միտքը, հետազոտական ունակություններն ու եզրակացություններ կատարելու կարողությունը: Այս համատեքստում նա արձանագրեց, որ ֆակուլտետում ուսուցանվող հինգ մասնագիտություններով համապատասխան ամբիոններում դեռևս նախորդ ուստարվա ավարտին տրված են եղել ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները: Աշխատանքների ղեկավարները, մասնավորապես ավարտական աշխատանքներինը, հետազոտական աշխատանքի ասպարեզում փորձառու դասախոսներ են և ունեն գիտական աստիճան: Նրանք առաջարկել են իրենց համար նախատեսված աշխատանքի թվից ավելի թեմաներ, ինչը նպատակ ունի ընդլայնելու ուսանողների ուսումնասիրության ոլորտի ընտրության հնարավորությունը: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում՝ իրավասու մասնագետների մասնակցությամբ: Քննարկումները փաստել են, որ թեմաների ճնշող մասը համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են և ներկայացնում են գիտական հետաքրքրություն: Դրանք գերազանցապես ունեն հստակ ձևակերպումներ:

Դեկանը հայտնեց, որ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի ավարտական աշխատանքների թեմաներից որոշները ունեն էքսպերիմենտալ (փորձարարական) բնույթ և կոչված են մղելու ուսանողին պրակտիկ աշխատանքի: Փորձի հիման վրա ձեռք բերված արդյունքներով ուսանողները կարող են կատարել ինքնուրույն տեսական եզրակացություններ:

Օտար լեզուների ամբիոնի առաջարկված թեմաների վերաբերյալ դեկանը հայտնեց, որ Ֆրանսերեն և Անգլերեն լեզուների ավարտական կուրսի ուսանողներին արդեն քանի տարի է առաջարկված են թեմաներ Արտասահմանյան գրականությունից: Թեև դրանք արդիական են և հետաքրքիր, բայց չեն հանդիսանում ուսանողների չորս տարիների մասնագիտական աշխատանքների եզրափակումը: Ելնելով վերոնշյալ փաստից՝ նա առաջարկեց հաջորդ տարիներին օտար լեզուների ավարտական կուրսերի

անողներին հանձնարարել թեմաներ, որոնք կբխեն նրանց մասնագիտական հղվածությունից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 2013-2014 ուս. տարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Նա հայտնեց, որ ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերը քննարկվել են մասնագիտական ամբիոններում: Դրանք հիմնականում բխում են տվյալ դասընթացի /տարբեր մոդուլներով/ առարկայական ծրագրերից: Այս հարցաշարերը տարբերվում են նախորդներից նրանով, որ որոշ հարցեր խոշորացված են և ընդհանրացված: Ներմուծվել են նոր հարցեր, փորձ է կատարվել ներառել այնպիսի հարցեր, որոնցով հնարավոր կլինի ստուգել ուսանողների տրամաբանական մտածողությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ.գ.թ., Դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 2013-2014 ուս. տարվա ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր, արձանագրեց դեկանը: Դա կդյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ.գ.թ., Դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Պատմության և քաղաքագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների ամբիոնների 2013-2014 ուս. տարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

ակարգի 5-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: ասախոսների աշխատանքային գործունեությունը թափանցիկ, կանխատեսելի և վերահսկելի դարձնելուն է միտված անհատական աշխատանքային պլանների կազմումը: Այս հանգամանքը նպաստում է ուսանողների հետ աշխատանքների՝ ավելի արդյունավետ և նպատակային իրականացնելուն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ.գ.թ., Դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ա. Սարհատյանը: Ամբիոնի վարիչները նշեցին, որ ներկայացված անհատական պլանները նախապես քննարկվել են համապատասխան ամբիոններում: Առանձին աշխատանք է տարվել սկսնակ դասախոսների հետ, բացատրվել և լուսաբանվել է խնդրի կարևորությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Պատմության և քաղաքագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների ամբիոնների դասախոսների 2013-2014 ուս. տարվա անհատական աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով կարևորվում է աշխատանքային պլանի առկայությունը: Այս հանգամանքը թույլ է տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Մ.գ.թ., Դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուս. տարվա առաջին և երկրորդ կիսամյակների աշխատանքային պլանները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Խաչատրյան